ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՍԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. *Անունը, ազգանունը.*

Արսինե Աղաջանյան

2. *Զբաղեցրած պաշտոնը.*

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության կրթական ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ

3. *Գործուղման վայրը և ժամկետները.*

Լատվիայի Հանրապետություն, ք. Ռիգա, հունիսի 16-ից 22-ը, 2024 թվական

4. *Հրավիրող կողմը.*

«RISEBA» կիրառական գիտությունների համալսարան

5. *Գործուղման նպատակը.*

Մասնակցություն «Հայաստանի և Մոլդովայի բուհերում հեռավար կրթության որակի բարելավում» (Strengthening the quality of online education in HEIs in Moldova and Armenia (MEDIA) դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված հերթական աշխատաժողովին:

6. *Քննարկված թեմաները.*

- Աշխատանքային փաթեթների ուսումնասիրություն,
- Կատարված աշխատանքային փաթեթների ներկայացում,
- Ծրագրի մասնակիցների անհատական հաշվետվությունների ներկայացում,
- Առցանց դասընթացների արդյունավետ կազմակերպման չափանիշների, անհրաժեշտ նախապայմանների ներկայացում,
- Նախատեսված ծրագրերի կազմման, անցակացման պայմանների հստակեցում,
- Համալսարանի մեդիա լաբորատորիայի ներկայացում
- Կատարված աշխատանքների քննարկման նպատակով անհատական հանդիպումներ գործընկերների հետ,
- Ընթացիկ այլ հարցեր:

7. *Հանդիպումները, ելույթները, այցելություններ.*

Աշխատաժողովին մասնակցել են ծրագրի շահառու հանդիսացող հաստատությունների ներկայացուցիչները: Արսինե Աղաջանյանը ներկայացրել է ծրագրի ժամանակացույցով նախատեսված հաշվետվությունը՝ կատարված այցերի, ծրագրի մասնակիցների վերաբերյալ:

Հայ և եվրոպացի գործընկերների կողմից ներկայացվեցին աշխատանքային փաթեթները, որոնք տրամադրվել են ծրագրի համակարգողներին, ինչպես նաև

քննարկվեցին ծրագրի ժամանակացույցով նախատեսված փաթեթների ընթացքի վերաբերյալ հարցերը:

Անդրադարձ կատարվեց առցանց դասընթացների արդյունավետ կազմակերպման չափանիշներին, անհրաժեշտ նախապայմաններին: Հատուկ ուշադրություն դարձվեց գործընկեր բուհերի կողմից գնված և գնման համար նախատեսված սարքավորումներին, որոնք պետք է համապատասխանեն առցանց ծրագրերի իրականացման համընդհանուր եվրոպական չափանիշներին: Հստակեցվեցին նաև նախատեսված ծրագրերի բովանդակությանն առնչվող հարցերը:

Կատարված աշխատանքների քննարկման նպատակով անհատական հանդիպումներ անցկացվեցին գործընկերների հետ, որի ընթացքում ներկայացվեցին արված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ:

Քննարկվեցին աշխատանքային հարցեր, ծրագրով նախատեսված գործողությունների և նախատեսվող այցերի հնարավոր ժամկետները:

8. *Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը*

Ծրագրի համակարգողների հետ աշխատանքային փաթեթների և անհատական հաշվետվությունների քննարկման արդյունքում որոշվեց ծրագրով սահմանված ժամկետներում ամբողջական տեղեկատվությունը ներկայացնել հաստատման:

9. *Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.*

Հստակեցվեցին հաջորդ աշխատաժողովի ժամկետները, վայրը: Աշխատաժողովը նախատեսվում է անցկացնել Հայաստանի Հանրապետությունում, 2024 թվականի աշնանը:

10. *Ստորագրությունը, ամսաթիվը*

Արսինե Աղաջանյան
25.06.2024թ.